ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 371-Ա « 15 » 11 2024թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

15.11.2024

ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ Signed by: AVETISYAN ARNAK 1701920336

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի

2024 թվականի նոյեմբերի «15» -ի № 371 Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչությունում **Կոմիտեի կանոնադրական գործառույթներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման համար**՝ պետական գույքի կառավարման բնագավառում իրականացվող բարեփոխումներն իրենց տրամաբանական ավարտին հասցնելու նպատակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ծրագրավորված միջոցառումները, մասնավորապես, պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման և սպասարկման գործընթացները կանոնակարգող իրավական ակտերում լրացումներ և փոփոխություններ կատարելու, նոր իրավական ակտեր մշակելու, ինչպես նաև պետական գույքի կառավարման ոլորտի և դրան առնչվող ոլորտների ռազմավարական փաստաթղթերից բխող կանոնակարգերի մշակման համար Կոմիտեի պետական գույքի կառավարման ծրագրերի և իրավական ակտերի մշակման վարչությունում նպատակահարմար է պայմանագրային հիմունքներով ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, հանրային ծառայության առնվազն տաս տարվա աշխատանքային ստաժ, կամ վերջին տաս տարվա ընթացքում առնվազն հինգ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.

2) պետական գույքի կառավարման ոլորտին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում, ինչպես նաև պետական գույքի մասնավորեցման և կառավարման ծրագրեր, ռազմավարական փաստաթղթեր, իրավական ակտեր մշակելու փորձ.

3) ունենա տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

4) համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

5) առնվազն մեկ օտար լեզվի պարտադիր իմացություն.

6) Հայաստանի Հանրապետության քաղաքացիական, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքերի, «Նորմատիվ իրավական ակտերի

մասին», «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին», «Պետական գույքի կառավարման մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին», «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Բաժնետիրական ընկերությունների մասին», «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, պետական գույքի մասնավորեցման, օտարման, օգտագործման և սպասարկման գործընթացները կանոնակարգող իրավական ակտերի և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է երկու ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետն երկու ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. մասնակցելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի «Պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետով սահմանված աշխատանքների իրականացմանը.

բ. մշակելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրի պետական գույքի կառավարման ոլորտին առնչվող իրավական ակտեր.

գ. ներկայացնելու է Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1063-Լ որոշումից բխող պետական գույքի կառավարման բարեփոխման վերաբերյալ առաջարկություններ.

դ. մշակելու է պետական գույքի կառավարման եռամյա ծրագրի և մասնավորեցման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունների կազմման վերաբերյալ ուղեցույց.

ե. մշակելու է «Պետական գույքի սեփականաշնորհման (մասնավորեցման) մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» և «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների կարգավորումների հիման վրա մեկ նոր միասնական օրենսդրական ակտ.

զ. ներկայացնելու է պետական գույքի կառավարման ոլորտին ուղղակիորեն առնչվող ռազմավարությունների և օրենսդրական ակտերի հիման վրա գույքային հարաբերությունները կանոնակարգող ոլորտային նոր իրավական ակտերի մշակման վերաբերյալ առաջարկություններ.

է. իրականացնելու է պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բարեփոխման նպատակով տարեկան կտրվածքով ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծություններ և ներկայացնելու է առաջարկություններ.

ը. ներկայացնելու է պետական կառավարման մարմինների, ինչպես նաև Կոմիտեի ստորաբաժանումների կողմից մշակված Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական ակտերի, նախագծերի ու մշակված ռազմավարական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական առաջարկություններ և եզրակացություններ.

թ. իրականացնելու է պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի վերաբերյալ վերլուծություն և ներկայացնելու է առաջարկություններ:

2) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը երկու ամսվա համար, կատարած աշխատանքների ավարտից երեք օր առաջ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է ներկայացված հաշվետվության հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների որ մասն է իրականացրել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-ից «թ» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջարդյունքների չափանիշներն են՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N 1363-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրի «Պետական գույքի արդյունավետ կառավարում» 6.7-րդ կետով սահմանված աշխատանքների իրականացման մասնակցություն.

բ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրից բխող Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագրով պետական գույքի կառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի մշակում.

գ. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 14-ի «Պետական գույքի կառավարման ոլորտի բարեփոխումների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N 1063-Լ որոշումից բխող պետական գույքի կառավարման բարեփոխման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում.

դ. պետական գույքի կառավարման եռամյա ծրագրի և մասնավորեցման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունների կազմման վերաբերյալ ուղեցույցի մշակում.

ե. «Պետական գույքի սեփականոշնորհման (մասնավորեցման) մասին», «Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» և «Պետական գույքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքների կարգավորումների հիման վրա մեկ նոր միասնական օրենսդրական ակտի մշակում.

զ. պետական գույքի կառավարման ոլորտին ուղղակիորեն առնչվող ռազմավարությունների և օրենսդրական ակտերի հիման վրա գույքային հարաբերությունները կանոնակարգող ոլորտային նոր իրավական ակտերի մշակում և առաջարկությունների ներկայացում.

է. պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների կառավարման բարեփոխման նպատակով տարեկան կտրվածքով ֆինանսատնտեսական ամփոփ վերլուծությունների իրականացում և առաջարկությունների ներկայացում.

ը. պետական կառավարման մարմինների, ինչպես նաև Կոմիտեի ստորաբաժանումների կողմից մշակված Հայաստանի Հանրապետության օրենքների, իրավական ակտերի, նախագծերի ու մշակված ռազմավարական փաստաթղթերի վերաբերյալ փորձագիտական առաջարկությունների և եզրակացությունների ներկայացում.

թ. պետական սեփականություն համարվող անշարժ գույքի օգտագործման վիճակի վերլուծություն և առաջարկությունների ներկայացում: